

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐԵՈՒՄ

ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 335-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«5) արժույթային գործարքների իրականացման համար սահմանված կարգերի ու կանոնների պահանջների պահպանման ճշտությունը.»:

Հոդված 2. Օրենսգիրքի 380-րդ հոդվածի 1-ին մասից հետո լրացնել նոր 1.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«1.1 Հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողները հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների վաճառքի դեպքում հսկիչ դրամարկղային մեքենայի միջոցով կամ դրան միացված ծրագրային և (կամ) տեխնիկական միջոցներով ապահովում են այդ հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ տեղեկատվության փոխանցումը հարկային մարմնի միասնական շտեմարան՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնի տպագրման միջոցով, իսկ Կառավարության սահմանած դեպքերում և կարգով՝ հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ հսկիչ դրամարկղային մեքենայի տեղեկատվական կտրոնի տպագրման միջոցով:»:

Հոդված 3. Օրենսգիրքի 381-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասում լրացնել հետևյալ բովանդակությամբ 18-րդ և 19-րդ կետեր.

«18) հսկիչ (նույնականացման) նշանով դրոշմավորված ապրանքի վաճառքի դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների քանակը,

19) հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորված ապրանքների

վաճառքի դեպքում հսկիչ (նույնականացման) նշանների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը (բացառությամբ «կանխավճար» գրառում ունեցող կտրոնների):»,

2) 3-րդ մասից հետո լրացնել նոր 3.1-ին մաս հետևյալ բովանդակությամբ՝

«3.1. Հսկիչ (նույնականացման) նշանների վերաբերյալ հսկիչ դրամարկղային մեքենայի տեղեկատվական կտրոնի վրա պետք է տպագրված լինի հետևյալ տեղեկատվությունը (տվյալները).

1) կտրոնի հերթական համարը (ԿՀ)՝ 8 նիշ.

2) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի անվանումը (կազմակերպության անվանումը և կազմակերպատիրավական տեսակի հապավումը, անհատ ձեռնարկատիրոջ անունը, ազգանունը).

3) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության վայրի հասցեն.

4) հսկիչ դրամարկղային մեքենա կիրառողի հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ).

5) հսկիչ դրամարկղային մեքենայի գրանցման համարը (ԳՀ).

6) կտրոնի տպագրման վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին, իսկ արտաքին (առևտրային) ծրագիր կիրառելու դեպքում՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կողմից գեներացվող վայրկյանը, րոպեն, ժամը, օրը, ամիսը, տարին.

7) ապրանքի անվանումը և ապրանքային դիրքը,

8) ապրանքի քանակը, դրա չափման միավորը.

9) հսկիչ (նույնականացման) նշանների քանակը,

10) հսկիչ (նույնականացման) նշանների հիման վրա հարկային մարմնի հաստատած ալգորիթմով գեներացվող ստուգիչ համարը:»:

Հոդված 4. Օրենսգիրքի 419-րդ հոդվածի՝ և՛

1) 9-րդ մասից հանել «համալիր», «կամ հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության» և «կամ հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության նախագծի» բառերը,

2) 11-րդ մասում «հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության» բառերը փոխարինել «հարկային ստուգման ակտի» բառերով:»:

Հոդված 5.

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը, բացառությամբ սույն օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների, որոնք ուժի մեջ են մտնում պաշտոնական հրապարակման օրը ներառող ամսվան հաջորդող չորրորդ ամսվա 1-ից:
2. Մինչև սույն օրենքի 4-րդ հոդվածի ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 419-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերով նախատեսված խախտումները հսկիչ գնման ուսումնասիրությամբ արձանագրված լինելու դեպքում սույն օրենքի 4-րդ հոդվածն ուժի մեջ մտնելուց հետո հարկային ստուգմամբ խախտումներ հայտաբերվելու դեպքում Օրենսգրքի 419-րդ հոդվածի 9-րդ և 11-րդ մասերով նախատեսված՝ խախտումը կրկնակի համարելու ժամկետի հաշվարկման համար հիմք է հանդիսանում կազմված հսկիչ գնման ուսումնասիրության արձանագրության ամսաթիվը: